04 AUG 2018

ԱՍԽԱՀ ՀՈՂԺՈՂԿՈՄԱՏԻ ՏԵԽՊՐՈՊ

ՈՐԻՆ-ԱԿԵԼԻ

ԱԳՐՈԿԱՆՈՆՆԵՐ

ԳԱՐՆԱՆԱՅԻՆ ՀԱՏԻԿԱՅԻՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ВОСТОКОВЕДЕНИЯ
Академии Наук
СССР

ԱԶԵՐՆԵԾՐ

ԴՅՈՒՂԱՏՆՏ. ԲԱԺԻՆ
ԲԱԳՈՒ
1934

630.018
Ա-11

630.013
Ա-34-11

Հայերենը խմբագրեց Ս. Շախունի,
Թարգմանեց Հ. Սարգսյան,
Տեխ.-խմբագիր Կ. Թառլանյան

Baş Mətbuat Mydiriliği Myvəkkiliği № 2030 Sifariş № 313 Tiraž 500.
İstehsalata verilmiş 15/III-34 Capa verilmiş 2/IV-34. Cap listi 1/16.
Kağız formatı 82×110. Azərnəşr mətbəəsində basıldı. Bakı, Əli
Bajramov küçəsi, „26"-lar adına, Kitab Sarayı"

С 34-11
Са 674

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ВОСТОКОВЕДЕНИЯ
Академии Наук
СССР

ՈՐԻՆԱԿԵԼԻ ԱԳՐՈԿԱՆՈՆՆԵՐ ԳԱՐՆԱՆԱՅԻՆ ՀԱՅԱՀԱՏԻԿԱՅԻՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ՎՈՐՈՇՈՒՄ № 119

ԱՍԽՀ ՀՈՂԺՈՂԿՈՄԱՏԻ ԿՈԼԵԳԻԱՅԻ, 1934 Թ. ՓԵՏՐՎԱՐ 7-ԻՑ.

Տեխպրոպի յեվ դաշտագործական վարչության ներկայացրած որինակելի ագրոկանոնները չայթուկի կենափի, կանեփի, այգեգործության, բանջարաբուծության, արախիսի, խաղողագործության, գարնանային ցորենի ու գարու յեվ ծխախոտի համար, հաստատել:

Առաջարկել բոլոր ռայ. հողբաժիններին յեվ ՄՏԿ-ներին, յուրաքանչյուր կոլտուրայի համար տրվող ագրոկանոնների հիման վրա առաջավոր կոլխոզների յեվ սովխոզների ներկայացուցիչների մասնակցությամբ կազմել ագրոկանոններ համաձայն իրենց ռայոնների պայմաններին յեվ Ռայգործկոմների կողմից հաստատվելուց հետո մինչեվ մարտի 20-ը ներկայացնել ԱՍԽՀ Հողժողկոմատին՝ հաստատելու համար:

Հողժողկոմատից հաստատված ռայոնական ագրոկանոնները, վորոնք պետք է հրատարակվեն վորպես պարտադիր վորոշում—Ռայգործկոմի նախագահությանը՝ անցկացնել կյանքում:

Հողժողկոմ Վ. ԵԶԻՐՈՎ

15177

.01. 2013

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀԱՍՍՌ-Арм ССР
Ա. Մեմ. Ա. ԱՍՏՎԱԾԱՏՐԻ ԱՆՎԱՆ

56058-66

I ՅՈՐԵՆ, ԳԱՐԻ ՅԵՎ ՎԱՐՍԱԿ

1. Հողի նախապատրաստելը.—Նոր հողամասեր յուրացնելուց, վորոնք հերկված չեն յեղել, նույնպես և վաղուց հերկված հողամասերում թփուտների, կոճղերի, քարերի առկայության դեպքում պարտադիր կերպով հողամասերի մաքրումը կատարել, գյուղատնտեսական գործիքների անարգել աշխատանքի համար։

2. Հողի մշակումը։ Սովխոզների և կոլխոզների, նույնպես և անհատական տնտեսությունների համար գարնանային հացահատիկի համար աշնանավար կատարելը պարտադիր է։ Աշնանավարը կատարել հոկտեմբերի և նոյեմբերի ընթացքում։ Հերկված դաշտի ծայրերը չորս կողմից պիտի հերկվեն։ Աշնանավարի խորությունը 15-18 սանտիմետր։ Արմատավոր մոլախոտներով վարակված հողերը պետք է հերկել մինչև 20 սանտիմետր, նայած արմատի արձակած խորության, բայց այն պայմանով, վոր թույլ չըտրվի հողի ներքին շերտի շրջելը։ Դեկտեմբերյան և առանձնապես հունվարյան հերկը բերքը զգալիորեն ավելի քիչ չափով է բարձրանում, քան թե աշնանային հերկը։

Աշնանավարի նախացանքային մշակումը.—աշնանավարի հերկի նախացանքային փխրացումը կատարել յերեսահերկիչներով կամ չորս խոփանի գութաններով. ցաքանները քիչ են պետքական այդ նպատակի համար։

Գարնանացաներկ.—Գարնանային հացահատիկային կուլտուրաների գարնանահերկին անցնել, հենց վոր այդ թույլ կտա հողի խոնավության դրությունը. հերկել 12-15 սանտիմետր խորությամբ։ Ավելի ծանր հողերում պարտադիր կերպով սկավառակել հերկը և այնուհետև ղիգ-զագ ցանքով 1-2 հետք անցնելով, անմիջապես ցանել։

3. Սերմերի ցանքին նախապատրաստելը.—Ցանելու հատիկի 100%-ային զտումը տրիերներով և տեսակավորող մեքենաներով, պարտադիր է։

Մրով, կամ այլ սունկային հիվանդություններով վարակված սերմերը—թունախեղդել։

Ցորենը թունախեղդել չոր յեղանակով, վարսակը և գարին—թաց։

Բացառապես թունախեղդել զտած սերմանյութը։

Թունախեղդումը կատարել գյուղատնտեսի կամ վնասատուների դեմ պայքարող ընկերության հրահանգչի ղեկավարությամբ։

Չոր թունախեղդումը կատարել փարիզյան կանաչ թունավոր փոշիի ոգնությամբ (յուրաքանչյուր 16 կիլոգրամ հատիկին 8 կամ 9 գրամ) կամ Դավուդովի պրեպարատով (յուրաքանչյուր 16 կիլոգրամ հատիկին 16-18 գրամ), մկնդեղաթթվային կալցիոնի փոշիով կամ АБ պրեպարատով։

Թաց թունախեղդումը կատարել ֆորմալին թունավոր նյութը ջրի մեջ լուծելու ոգնությամբ. տակառներում, դույլերում կամ ուրիշ ամանում պատրաստում են լուծույթը մի բաժին ֆորմալին (ըստ ծավալի) լուծելով 300 ծավալ ջրում։

Վորպեսզի 160 կիլոգրամ հատիկ լվանալ, պետք է վերցնել 100 գրամ 40% ֆորմալին և նրան լուծել 36 լիտրի մեջ (3 դույլ ջրում)։

4. Ցանքի ժամկետները.—Գարնանային հացահատիկների ցանքի սկիզբն ու վերջը յուրաքանչյուր ռայոնում հաստատվում է Ռայհողբաժնի կողմից և պարտադիր են յուրաքանչյուր տնտեսության համար։

Հանձնարարվում են հետևյալ որինակելի ժամկետները.

Գարնան ցորեն. լեռնային ռայոններում 10/IV—25/IV
նախալեռնային 25/III—14/IV
Գարնան գարի. լեռնային ռայոններում 1/IV—15/IV
նախալեռնային 10/III—1/IV
Վարսակ. լեռնային ռայոններում 20/III—15IV
նախալեռնային 5/III—1/IV

5. Սերմելու յեղանակները. լեռնային վայրերում, վորտեղ շարքացանից ոգտվելն անհնար է շնորհիվ մակերևույթի կազմության պայմանների, թույլատրվում է շաղացան։ Հարթ հողամասերում կատարել շարքացան։

Հացահատիկային կուլտուրաների սերմերի սերմելու խորությունը 2-4 սանտիմետր, նայած հողի վերին շերտի խոնավությանը, վորքան նա խոնավ է, այնքան ցանքը յերես է կատարվում։ Փխրուն հողում սերմերն ավելի մեծ խորությամբ են սերմվում, քան թե ավելի ծանր հողերում։

6. Մի հեկտարի վրա ցանելու նորման:

	Շարքացան	Շաղացան
1) Գարնան ցորեն . .	1,2 ցենտներ	1,5 ցենտ.
2) Գարնան գարի . .	1,0 »	1,3 »
3) » վարսակ . .	1,1 »	1,3 »

Նորման յենթակա յե Ռայհողբաժնի ճշտմանը և հաստատմանը։

7. Աղտոտված հողամասերում կատարել մոլախոտերի այրումը.—Մոլախոտերը տեղերում և ցանքսի շուրջը հարել։

8. Ջրելը.—Ջրովի ռայոններում, վորտեղ գարնանային բույսերից հիմնականում կարելի յե հանդիպել միայն վարսակ, պետք է յերկու անգամ ջրել.

1)—Բուդում գցելու ժամանակ

2)—Ծաղկելու ժամանակ

9. Բերքահավաքը.—Հարթ հողամասերում հունձը կատարել մեքենաներով. ցորենի հունձը, վորոնք հեշտ թափվող են, կատարել մոմային հասունության շրջանում այն հաշվով, վոր հունձն ավարտվի 5-7 որվա ժամկետում։

Չթափվող ցորենի համար հնձի ժամկետը կարելի յե յերկարացնել մինչև 10 որ։

Գարին հնձել կատարյալ հասունացման սկզբին, հնձելու ժամկետը 8-10 որ։

Վարսակի հունձը կատարել ներքևի հասկերի հասունության մոմենտին։ Հնձելու ժամկետը 5-7 որ։

10. Պայքար կորուսցների դեմ բերքահավաքի շրջանում.

1.) Հունձը կատարել սահմանված ժամկետին, թույլ չտալ ցանքսերի յերկար կանգնելը վոտի վրա, վորից թափվում է։

2.) Հնձած հացը խուրձեր կապել և կազմել կուտակներ կամ բարդեր, հենց այստեղ դաշտում չորացնելու համար։

3.) Դաշտում մնացած բոլոր հասկերը հավաքել ձիան կամ ձեռքի փոցխերի ոգնությամբ։

4.) Հնձած հացը տեղափոխելուց սայլերը կամ ֆուրգոնները կահավորել տակի փռոցներով, թույլ չտալով, վոր հատիկները ճանապարհին թափվեն։

11. Կալսելը վոչ մի դեպքում չձգձգել, այն վերջացնել վոչ ավելի քան 10-15 որվա ժամկետում։

Կալսելուց առաջին հերթին ոգտագործել յեղած կալսիչ մեքենաները։

Կալսած հացահատիկն անմիջապես անցկացնել յերնելու մեքենայով, տեսակավորողով և տրիերով։

Հացահատիկը պահել ախտահանած, չոր և լավ քամհարած ամբարներում։

12. Կալսումը վերջացնելուց անմիջապես հետո պետությանը հանձնել պարտավորության համաձայն հասանելիք հացահատիկի քանակը, ավելի առողջ և վորակավոր հացահատիկից սերմային և ապահովագրական ֆոնդերի առանձնացում կատարել։

Սերմային և ապահովագրական ֆոնդերն առանձնացնելիս ղեկավարվել հատուկ հրահանգով։

II ՅԵԳԻՊՏԱՑՈՐԵՆ

Հողի նախապատրաստումը և մշակումը (աշնանավար, գարնան հերկ) կատարվում է այնպես, ինչպես այդ հաստատված է գարնանային հացահատիկների (ցորենի, գարու, վարսակի) համար։

1. Յեգիպտացորենի սերմերի նախապատրաստումը. սերմերի համար ընտրել առողջ, լիքը և մի գույնի գլուխներ։

Ցանելու համար ընտրած գլուխները պետք է կալսվեն վոչ ուշ քան 15-20 որ ցանելուց առաջ և շնորհիվ նրանց սովորական խոնավության, պետք է չորացվեն մինչև նրանց կարծրանալը։

Զորացնելը կատարվում է հատիկները բարակ շերտով փռելով, չոր և լավ քամհարվող շենքերում, յերնելով ամեն որ։

Ցանելուց առաջ յեգիպտացորենի սերմերը պետք է փորձել նրանց տնտեսական պիտանիության և ծլունակության տեսակետից։

2. Յեգիպտացորենի ցանքը կատարվում է հետեվյալ ժամկետներում

Լեռնային ռայոնները . . .	25/IV—15/V
Նախալեռնային » . . .	20/IV—15/V
Դաշտավայրերում » . . .	20/V—10/V

Այդ ժամկետների սահմաններում յեգիպտացորենի ցանելու ժամանակը ճշտվում է Ռայհողբաժնի կողմից։

Մի հեկտարի վրա ցանելու յեգիպտացորենի նորման—32 կիլոգրամ հատիկ է։

Յեգիպտացորենի ցանելը պարտադիր կերպով կատարել յեգիպտացորենի կամ բամբակի հատուկ շարքացանով։

Ցանելուց պահպանել ուղիղ և հավասար շարքերը կուլտիվատորով միջշարքային մշակումն կատարելու համար։

Ցանող մեքենաների բացակայության դեպքում, շարքացանը կատարել թորխով, բուկկերով կամ թևը հանած թեթև գութանով։

Սերմերը գցելու խորությունը 5-7 սանտիմետր։

Շարքերի մեջ տարածությունը պահպանել 50-80 սանտիմետր, իսկ շարքերում նոսրացում կատարելու դեպքում, տարածությունը պետք է լինի 30 սանտիմետր։

Վոչ մի դեպքում չի թույլատրվում յեգիպտացորենի ցանելը չորացած հողում։

3. Ջրելը—Յեթե ցանելու ժամանակ հողը չորանում է (ջրովի ռայոններում), յեգիպտացորենի ցանումը կատարել արաթով, վերջինիս նորման՝ 1500—2000 խորանարդ մետր մի հեկտարին։

I Ջրելը—(չհաշված արաթը) կատարել ծաղկելու ժամանակ, II Ջրելը՝ հատիկները լցնելու ժամանակ։ Նորման 1000-1200 խորանարդ մետր մի հեկտարին։

4. Խնամքը՝—Առաջին քաղհանը շարքերի 30 սանտիմետր տարածության վրա նոսրացման հետ կատարել առաջին հինգ տերևը յերևալու ժամանակ։

Հետագայում, կախված մոլախոտերի զարգացման ուժից, կատարել վոչ պակաս քան միջշարքային յերկու կուլտիվացիա, վորից մի կուլտիվացիան կատարել շարքերի մշակման (քաղհանի) զուգընթաց։ Կուլտիվացիայի և փխրացման խորությունը վոչ ավել 7-8 սանտիմետր։

Յեգիպտացորենի վրա սունկային հիվանդություն յերևալուց (բշտակավոր մուր), վնասված բույսերը հեռացնել դաշտից և այրել։

5. Յեգիպտացորենի քաղումը հատիկ դարձնելու համար կատարել հատիկի կատարյալ հասունացած մոմենտին։ Հավաքած յեգիպտացորենը պահել դլուխներով չոր և լավ քամհարվող շենքերում։

Գլուխները կալսել հարկ յեղած դեպքում։

6. Գլուխները չորացնելուց անմիջապես հետո կատարել սերմային և ապահովագրական ֆոնդերի առանձնացումը լավ հատիկի հաշվին։

III ԲԱԿԼԱԲՈՒՅՍԵՐ

1. Բակլաբույսերի ցանքը անպայման կատարել աշնանավարում (տես I գլուխ)։

2. Սերմերի նախապատրաստելը:—Ցանելուց առաջ անպայման կատարել սերմերի մաքրումը և նրանց տեսակավորումն՝ ըստ քաշի և չափի։

Այն դեպքում, եթե բակլաբույսերի սերմացուների մեջ մնասաուներ լինեն, անպայմանորեն սերմացուն պետք է թունախեղդել։

Ցանելուց առաջ անհրաժեշտ է սերմերը փորձել։ 80-%-ից ցածր և մաքրությունը 90 տոկոսից ցածր սերմերը հանձնարարվում է չցանել։

3. Ցանելը:—Սիսեռը, վոլորն և լոբին պարտադիր կերպով ցանել շարքային յեղանակով 60-70 սանտիմետր շարքամիջով։

Վոսպ ցանելը, նկատի առնելով վոր նա բուսնում է ԱՍՆՀ լեռնային ռայոններում թույլատրվում է շաղ ցան։

1 Հեկտարի ցանելու նորման

Սիսեռի	. . .	0,9 ցենտներ
Վոլորն	. . .	0,9 „
Լոբի	. . . .	0,7 „
Վոսպ	. . . .	1,0 „

Բակլաբույսերի ցանքը պետք է կատարվի հետևյալ ժամկետներում.

Զոնաներ (Ռայոններ)	Սիսեռ և վոլորն	Լոբի	Վոսպ
Լեռնային	—	25/IV-15/V	1/IV-25/IV
Նախալեռնային	25/III-15/IV	5/IV-10/V	25/III-20/IV
Դաշտային	15/III-1/IV	15/IV-5/V	—

Սերմերը գցելու խորությունը, կախված նրանց չափից և հողի հերկած շերտի դրությունից, պետք է լինի 4-6 սանտիմետրի սահմաններում։ Վոչ մի դեպքում թույլ չի տրվում բակլային բույսերի ցանումը չորացած հողում։

4. Ջրելը.—Բակլաբույսերը ջրովի ռայոններում ցանելու մոմենտին հողը չորացած լինելու դեպքում անհրաժեշտ է արաթ կատարել 1 հեկտարին 1500-1600 խորանարդ մետր նորմայով։

Բակլաբույսերի (գլխավորապես նոխուդի) վեգետացոն ջրումը դաշտային և նախալեռնային վայրերում վորպես կանոն, կատարել մի անգամ ծաղկելու շրջանում։

5. Բակլաբույսերի ցանքի խնամքը. Պարտադիր կերպով անցկացնել վոչ պակաս քանյերկու քաղհան, վորոնցից.

1-ը միաժամանակ նոսրացումով անցկացնել յերբորդ զույգ տերևները յերևալու ժամանակ։

2-րդը, կախված մոլախոտների զարգացման չափից, բայց վոչ ուշ ծաղկելու սկզբից։

Վոչ մի դեպքում թույլ չտալ ցանքսերում մոլախոտային բուսականության խիստ զարգացումը։

Դաշտային հարթ տեղերում պարտադիր կերպով առաջին քաղհանի փոխարեն անցկացնել յերկու կուլտիվացիա ձիով, փխրացնելով շարքամեջերը։

6. Բերքահավաքը—վոչ մի դեպքում թույլ չտալ բակլաբույսերի վոտի վրա յերկար կանգնելը։ Ժամանակին չհավաքելն առաջացնում է բերքի զգալի կորուստներ։

Հարած բույսերը փոքրիկ դեզերով դարսվում են դաշտում չորանալու համար։

Հասունացած բակլաբույսերը բարձելուց և տեղափոխելուց թույլ չտալ ուժեղ թափահարումը։

Դա մեծ կորուստներ է պատճառում։

Բակլաբույսը դաշտից տեղափոխել սայլերով և սայլակներով, վորոնց տակը փռել կապերտներ կամ բրեզենտներ։

Կալումը կատարել 10-15 որում։

7. Կալումը.—կալելուց հետո կատարել պետական պարտավորությունները—առանձնացնել սերմային և ապահովագրական ֆոնդերը բացառապես ամենախոշոր, առողջ և չոր հատիկի հաշվին։

Սերմերը պահել նախորոք ախտահանված չոր և քամհարվող շենքերում, պահեստներում։

IV ԿՈՐԵԿ

Կորեկի ցանքսը կատարել գարնանն աշնանավարի վրա։

Հողի գարնանավարի նախապատրաստելը, մշակումը և նախացանքային մշակումը պետք է կատարվեն, ինչպես և մնացած հատիկայիններինը (տես վերև)։

1. Կորեկ ցանելու հետևյալ օրինակելի ժամկետներն են սահմանված։

Լեռնային ռայոնները . . .	1/V-20/V
Նախալեռնային	1/V-25/V
Դաշտային(Ջրովի)	1/V-1/VI

2. Ցանքսը հարթ տեղերում կատարե՝ շարքային։

Ցանելու նորման—30 կիլոգրամ մի հեկտարին։ Սերմանյութերի զտումը—100 տոկոս։

Սերմելու խորությունը—2-4 սանտիմետր։

3 Խնամքը. մոլախոտերի քաղհանումը սկսել առաջին տերևները դուրս գալուց անմիջապես հետո, վորովհետև այդ ժամանակ կորեկն առանձնապես կարիք է զգում խնամքի։

Հետագայում, նայած մոլախոտերի զարգացման ուժին, կատարել վոչ պակաս քան 2-3 թեթև քաղհան։

4. Բերքահավաքը. հունձը սկսել ներքին հասկերի և միջին հասկերի մեծ մասի հասունանալու ժամանակին։

ԱԳՐՈՄԻՆԻՄՈՒՄ ՎԱՂ ՑԵԼԻ ՀԱՄԱՐ

1. Վաղ ցելը (ինչպես և սևը) միայն այն ժամանակ է իր նշանակությունը ստանում, վորը կայանում է հողի ջերբիությունն բարձրացման մեջ, յերբ ժամանակին մշակելով պահվում է մոլախոտ բույսերից մաքուր դրությունն մեջ։ Հակառակ դեպքում ցելը ֆնասակար է և հանդիսանում է մոլախոտների բուսատեղ։

2. Ցելերը մոլախոտային բուսականությունից մաքուր վիճակում պահելը պարտադիր է հայտարարվում։

3. Մոլախոտերի դեմ պայքարը պետք է տանել վոչ թե ցաքանելով, այլ բազմախոփ գութանի հերկով։

4. Վաղ ցելերը պարտադիր են այն ռայոնների սովխոզների, կոլխոզների և անհատական տնտեսությունների համար, վորտեղ ամառային տեղումներ են լինում։

Ծանոթություն։ Այն ռայոններում, վորտեղ չոր անանձրև ամառներ են լինում, հանձնարարվում է ուշ ցելը, առանց ցաքանելու և կրկնահերկի։

5. Վաղ ցելի հերկի ժամկետ է սահմանվում ապրիլը և մայիսը, ուշի համար 18-20 սանտիմետր։

6. Վաղ ցելի հերկի խորությունը 15-18 սանտիմետր, ուշի համար հունիսը։

ՀՀ Ազգային գրադարան
NL0276843

2гр

15177

С34-1
а674

Мд 1
877
877-0

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ПОСТОКОВЕДЕНИЯ
Академии Наук
СССР

27 МАЙ 1934

63
Ц-11

Техпроп НКЗ АССР

Примерные агроправила по зерновым яровым культурам

Азернешр—Сельхозотдел Баку—1934.